

Յովհաննէսի գիրքն ունինք. թերեւս ընդորինակողի մը՝ ձեռքը կայ մէջը, կամ նոյն իսկ երկու ընդորինակողի, եթէ լուսանցքի մէջ գրուածները ուրիշէ մ'ենն՝:

Եւ ո՞վ է: Է « *Ung religieux, nommé frère Johan d'Estampes* (այլուք Jehan) *Dardel, nés d'Estampes en la province de France* (Ch. CXV, Ann. O. L. 2, 13 — Հայերէնը ձժԶ, էջ 158). Լեռնի խոստովանաւորը և քարտուղարն է՝, և յետոյ եւ ղած է « *evêque de la cité de Tortible* » (Ch. CXXXVI, Ann. O. L. 2, 15 — Հայերէնը ձԼԲ, էջ 189):

Բայց չեմ կրնար լռել կապած մը: Փրանկիսկեանք սովորութիւն չունէին իրենց ծննդավայրն յիշել. իսկ մեր ժամանակագիրն է *frère Jean d'Estampes*. Անկարելի չէ որ, եպիսկոպոս եղած ժամանակը գրելով, պահած ըլլար այս պատուի անունը, որուն կը հակառակէին Հռոմայ քահանայապետին հաւատարիմ մնացած հաւատացեալները. և թէ վերջապէս *Dardel* անունն մէջ կը ծածկուի *Tartibulensis* բառը, ընդորինակողէն՝ գէշ կերպով գրուած և մեկնուած. նոյն գաւառի գիտնականներուն կը պատկանի ստուգելը թէ այնտեղ կան կամ եղան Դարդէլ անուամբ բնակիչներ՝:

1. Ընդորինակողի ձեռքը կը մասնէ *Barcout* (Ch. CXXXI), եթէ ստուգել *Barcoue* չէ գրուած. Հայ թարգմանութիւնը տարօրինակ անուն մ'ունի ձոննա Սափիրա, Փաղղիբըն չեմ կրնար յիշատակել՝ բայց եթէ ձԼԱ զիտոյն լուսանցքները, ուր կը կարդացուի *messire Bonnienc chevalier*. Նոյն տեղը (էջ 184) կայ միայն *Bonna*. Առ այժմ կարող չենք եզրակացնել:

Ով որ կ'ուզէ նոր օրինակներ տեսնել չին եղելուքեան մը, այն է թէ Ինչպէս անունները կը կերպարանափոխուին և կ'անշատանան, համեմատէ *Archives de l'O. L.* (1, 539), *Straphanus de Cunis, province Junnec*, որ կ'ըլլայ *de Lomich* (Wadding), *de Iuniel Marco de Lisboa; della Niche* (Calaorra) — II գ է: 3. *Ann. O. L.* 2: 3.

2. *Frère Johane* escript de sa main partie de toutes les lettres que le roy envoioit en Panent ... (Ch. CXV. — Ann. B. d. 2, 14. — Հայերէնը ձժԶ, էջ 159):

4. Ուսուցչապետը, սոյն ուսումնասիրութիւնը իտալերէն լեզուով առանձին պիտի հրատարակէ իտալացոց համար, որոնց անծանօթ է Լեռն Զ. Ի Վենետիկ գալն: Վերջոյնեալ նամակները՝ դիտմամբ բառացի թարգմանուած են:

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՓԱԽՏՈՍ ԲՈՒՋԱՆԴԱՅՈՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

(Նախըմթ. տես էջ 497)

142. էջ 189. տող 29. « Այլ ժանուարս » — Ուղղ. ժանուարս տես էջ 194. տող 17. էջ 326. տ. 12:

143. էջ 191. տող 1. « Այս պատմեցաւ թագաւորին .. յաղագս օրերացն » — Ուղղ. եպիսկոպոս կամ սեփարդեացի կամ բնութանացն: Հայր Մարգարէտն Արտագերից բերդի պաշարման ժամանակ գաղտբերդի մէջ մտաւ « և թշնամանեաց զտի-

կինն մեծապէս իրեւ զբող մի » էջ 171: Զայդ Պապայ կը պատմեն. նա գաղտուկ մտաւ բերդը և « թշնամանս ձաղանաց եղ » և կամ « եղ անարգանս տիկնոջն » (անդ) և փախաւ:

144. էջ 191. տող 29. « Եւ փոխանակի նորա տեղի ... գիւրգղակ ոմն » — Ուղղ. « փոխանակէ ... գիւրգղակ ոմն » . և կամ « փոխանակ կարգի ի նորա տեղի », և այլն:

145. էջ 193. տող 12. « Բայց մինչդեռ խօսեցաւ զային զօրքն Պարսից » — Ուղղ. խօսողեցաւ կամ խորխորացեցաւ զային: — Պատմարագով ամենայն պատրաստութիւն և լուծալորի խորխորացն ըմբռնելու զՄուշէղ՝ մատն և տուր կը լինին որ այդ խօսեցեալ բառն անտեղի է, թէ այստեղ խաղաղ և հանդարտ բնաւորութիւն ունե-

1. Այս բառի մասին տես Հ. Ն. Անդրէկեանի Լեռնաբանական քրոնիկը (1906 Հոկտ.)

ցող բառ չպիտի լինել, այլ այնպիսի՝ որ յայտնէ Պարսից զօրաց ոգին որով վստահ իրենց ուժերի վերայ խաղալով և խրոխտալով կը դիմէին յափշտակելու իրենց որբը:

146. Էջ 193. տող 15. « Յանձն լիցի ձեզ ... տարցուք յաղրան » . որովհետեւ նախ Ուսնայրն է խօսողն, և երկրորդ իրենց բռնած գերիք յոյն արուեստաւորք էին՝ — յայտնի է իբրեւ բրուտ քարկոփ և որմնադիրներ, — ուստի հաւանական թուի ուղղել յաղրանս բառը՝ ի յԱղրանս: Իսկ եթէ չկայ այլ բացատրութիւն ողջագոյն, այն ատեն կարելի է յաղրանս մեկնել իբր տար և ելան յաղրարեան, կամ ուղղել « աշխատութիւնս » ի գործ կաւագործութեան, և այլն:

147. Էջ 195. տող 8. « Յաջմէ զօրացն Յունաց » և նոյնպէս « յաջում թեւի » . ինչպէս կարգադրուած էր բանակը որ Մուշեղ Հայոց գնդով լինի թէ՛ Յունաց աշակերտը և թէ իւր ալ բանակի ալ բնի հրամանատար: — Իսկ թիւ էր ապա ընդհանուր Հայոց գնդի հրամանատարն? Եթէ չընդունինք որ Մուշեղ ամբողջ բանակի աջ թեւը կազմէր:

148. Էջ 195. տող 26. « Դու խնցեք այրեցիր գիւ » : — Ուղղ. « Դու խարեցիր տակցեր գիւ » . Ս. Ներսէս երաշխաւոր կը լինի Մուշեղի համար առ Պապն եղած ամբաստանութեանց համար, որպէս թէ նա հաւատարիմ չէ և կրնայ մատնել զբանակն և զթագաւորն՝ Պարսից, և այլն: Պապ չկարենալով մերժել Ս. Ներսէսի բարեխօսութիւնը, կը խնդրէ որ նա երդումն առնուի ի Մուշեղայ՝ որպէս զի չստէ իւր խոստման, յետոյ թողուլ մտնելու պատերազմի մէջ (էջ 194). Ուստի երբ արիւնշախանձ առիւծու պէս Մուշեղ « յառաջմուխ տագնապեալ երթային », և թագաւորի ուշքէն կորան Մուշեղի նշանները, Պապ սկսաւ կակծուն աղաղակել և բողբոջել Ներսէսի դէմ, թէ դու ալ համամիտ էիր Մուշեղի և « խարեցիր, տակցեր գիւ » : Իսկ Ս.

Ներսէս կը հանգստացնէ ասելով . « Մի արքայ, մի կարծեք. զի ոչ ստէ մեզ այրն այն » : Այսպէս կը վերականգնի իմաստը:

Հ. ԳԱՐԻԲԵԼ, ՆԱԶՈՊԵՏԻԱՆ

Շարայարկի

Ծ Ի Ս Ա Կ Ա Ն

Պ Ա Տ Ա Ի Մ Գ Մ Մ Ա Տ Ո Յ Յ

Ե Ի

ԶԻԵՍԱՆՈՐՈՒՄ ՔԱԼԱՆԱՅԻՆ

(Նոյնիւր. տեւ էջ 442)

Քալանան որ պիտի պատարագէ պէտք է զգեստաւորուած ըլլայ, կրելով իր վրայ իրմէ ստորագոյն պաշտօնէից բոլոր զգեստները. այսպէս՝ դպրին՝ շապիկը, կիսասարկաւագին բազկին ուրարը՝ քոզպակի ձեւով, սարկաւագին ուրարը՝ փորութարի ձեւով և իւր յատուկ զգեստը շուրջառ կամ նափորտ կոչուած:

Քալանային զգեստաւորուած պատարագելու, կամ ո՛ր և է խորհուրդ մը կատարելու սովորութիւնը՝ Արաքեալներէն աւանդուած չէ. քրիստոնէութեան առաջին դարուն մէջ պաշտօնեայք իրենց պարզ զգեստով կը կատարէին Ս. Խորհուրդները: Մեր մէջ չորրորդ դարու մէջ յունական պատարագին հետ կրօնական զգեստն ալ կը մտնէ. բայց եղած են դարեր և զաւառներ՝ որոնք պէտք չեն զգացած պատարագը զգեստաւորուած կատարելու. և այդ մինչեւ Ն. Լամբրոնացոյ օրով տեսնուած է. այդ պատմաառաւ նա իր Պատարագին մեկնութեան մէջ, սաստիկ դէմ կը խօսի կայ յոռի սովորութեան և համոզման, այս պատմազանցութիւնն Լամբրոնացիէն վերջ շարուանալուած է դեռ մէկ ու կէս դար, մինչեւ

1. Գոտին եւս զպրաց յատուկ է, ինչպէս որ ցարդ մի քանի տեղեր զպրաց շապկին վրայ գոտի կը կապեն: